ի ո՞ր սիօն՝ յամուր ամրոց՝ ք՞ղք դաւթի։
Անդ զետեղե՛լ՝ ո՞ր տապանակ՝ հնոյ ուխտի.
աստ զերահրաշ՝ ամենասո՞ր՝ նշանն խաչի։
Անդ քարեղէն՝ տախտակ եդեալ՝ հին պատգամի.
5 աստ քաղցրալուր՝[1] աւետարան ըն հրաշալի։

48ը Անդ մանանայ՝ կեր մարմնաւոր՝ հրէից ազգի.
աստ երկնային՝ հաց հոգեւոր՝ մարմինն փրկչի։
Այն հին տաճար՝ սօղոմօնեան՝ հիմանց քակտի.
այս սքրալին՝ այժմ և յապայ՝ յարակայի։
10 Վ՞ս այսորիկ՝ մեծ՝արքային՝ խակ բոբբոքե՛լ՝ սիրով փրկչին.
շինեալ զսա՝ յիւրում բազկին՝ գայ առաջի՝ կենարարին։
Սիրով հայցէ՝ զինդրելին՝ քաւել զյանցանս՝ բոլորովին.
զոր մարդկօրէն՝ գործեաց ինքնին՝ խաբմամբ չարին։
15 † Արդ՝ ով մանկունք՝ փափկասնունդք՝ գրկաց սորին.
եկայք մտցուք՝ յայս առագաստ՝ սքանչելին։
Զայնիւ երգով՝ զո՞ր օրհնեսցուք՝ յաւէտ ի սին.
բերկրեալ հոգւով՝ զուարճասցուք՝ ի միասին։
Ի սմա և գունդ՝ ըք հրեշտակաց՝ զօրք անմարմին.
20 աներևոյթ՝ յաչաց մերոց՝ միշտ ծառային։
Եղանակեալ՝ քաղցր ձայնիւ՝ զերգ հրաշալին.
ասեն օրհնեալ՝ են փառքք տ՞ն՝ ի ո՞ր տեղին։
Հողեղինաց՝ ըս կցորդեալ՝ հրեղէնք[2] լինին.
յայսմիկ կայան՝ ըս սրբուե՞՝ դասաւորին։
25 Ա՞ծեղէն՝ շողն ի հօրէ՝ լուսածագի.[3]
փայլակնաձև՝ նշուլազարդ՝ ճառագայթի։

49ա Ի քոյ արփոյ՝[4] պարարտացե՛լ վայր դալարի.
ով մայր մաքուր՝ կաթուղիկէ՝ եկեղեցի։
Ի քէն հնչեալ՝ ձայն ահարկու՝ փողոյ մեծի.

---

[1] Զ. առաջին r-ի վրայ սղման նշան։
[2] Զ. r-ի վրայ սղման նշան.
[3] Զ. լուսածագի.
[4] Զ. արգոյ (?).